ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող **Կարապետյան Տաթևիկ Զավենի «Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի սոցիոլոգիական վերլուծություն»** թեմայով ատենախոսության վերաբերյալ պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Կարապետյանի ատենախոսությունը նվիրված է յուրաքանչյուր հասարակության համար արդիական և ցավալի սոցիալական մի գործընթացի՝ անչափահաս երեխաների խնամազրկության, սոցիոլոգիական վերաիմաստավորմանն ու համակողմանի վերլուծությանը, մասնավորապես՝ այդ գործընթացի սոցիալական մեխանիզմների և դրանց պայմանավորող գործոնների վերհանմանը: Թեման խիստ արդիական է և դրա կարևորությունը պայմանավորված է առնվազն երեք հանգամանքով:

Առաջինը՝ Հայաստանի Հանրապետությունում 2000-ական թվականներից իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումները երեխաների պաշտպանության քաղաքականության կենտրոնում դնում են խնամազրկության կանխարգելումը, մինչդեռ դրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գիտական մեկնաբանություններն ու երեխայի՝ ընտանեկան խնամքից զրկման սոցիալական մեխանիզմների վերաբերյալ համակարգված հետազոտությունները շարունակում են մնալ սակավ և անբավարար: Աշխատանքը, լրացնելով նշված գիտական բացը, հնարավորություն է տալիս առավել խորությամբ հասկանալ խնամազրկության առաջացման սոցիալական պայմաններն ու մեխանիզմները, բացահայտել այդ գործընթացը պայմանավորող գործոնների փոխկապակցվածությունը և, այդպիսով, ստեղծել գիտական հիմքեր կանխարգելմանն ուղղված առավել նպատակային և արդյունավետ քաղաքականությունների մշակման ու իրականացման համար:

Երկրորդը՝ հայաստանյան սոցիոլոգիական գրականությունում խնամազրկությունը ավանդաբար քննարկվել է կա՛մ իրավական կարգավիճակի, կա՛մ ինստիտուցիոնալ խնամքի հետևանքների տեսանկյունից: Հեղինակի առաջարկած՝ խնամազրկությունը որպես սոցիալական

հարաբերությունների և սոցիալական կապիտալի վերափոխման գործընթաց դիտարկելու մոտեցումը սկզբունքային տեսական տեղաշարժ է, որը թեման դուրս է բերում նկարագրական-վարչական դաշտից և տեղափոխում սոցիոլոգիական բացատրության հարթություն:

Երրորդը՝ 2024 և 2025 թթ. ընդունված նոր օրենսդրական ակտերի պայմաններում առանձնահատուկ գործնական նշանակություն է ստանում խնամքի թերացումների վաղ, լատենտ ձևերի բացահայտման խնդիրը, որին ուղղակիորեն անդրադառնում է ատենախոսությունը:

Ընտրված թեման լիովին համապատասխանում է ԻԲ.00.01 մասնագիտության անձնագրին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (109 անվանում), հապավումների ցանկից և 9 հավելվածից: Աշխատանքը պարունակում է 8 աղյուսակ և 2 գծապատկեր:

Առաջին գլխում ներկայացվում են մանկության, երեխաների խնամքի և խնամազրկության սոցիոլոգիական մեկնաբանությունները, ինչպես նաև ծնողի դերի սոցիալական կառուցակցման հարցերը: Երկրորդ գլուխը նվիրված է սոցիալական կապիտալի հայեցակարգի տեսական հիմքերին և դրա կիրառելիությանը երեխաների խնամքի ու պաշտպանության համատեքստում: Երրորդ, ամենածավալուն գլուխը ներկայացնում է հետազոտության մեթոդաբանությունը, խնամազրկության հասկացութային վերլուծությունը, պատճառահետևանքային շղթաների ուսումնասիրությունը, խնամազրկության դրսևորման ձևերի դասակարգումը և սոցիալական կապիտալի տեսակների ու խնամազրկության բնութագրիչների միջև կապերի քանակական վերլուծությունը:

Աշխատանքի ներկայացման ոճը՝ ակադեմիական է և հստակ: Սեղմագիրը ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը և արդյունքները: Հեղինակի 6 գիտական հրապարակումները, ներառյալ միջազգային ռեֆերատիվ ամսագրում տպագրվածը (Children and Youth Services Review), ինչպես նաև 4 գիտաժողովներում ներկայացված զեկուցումները բավարար են աշխատանքի փորձաքննության պահանջների տեսանկյունից:

Ատենախոսությունն ունի մի շարք էական արժանիքներ, որոնք հարկ եմ համարում առանձնացնել:

1. Հեղինակի կողմից առաջարկված՝ «խնամազրկություն»՝ որպես գործընթացի, և «ընտանեկան խնամքից զրկված երեխա»՝ որպես կարգավիճակի, հասկացությունների տարբերակումը մեթոդաբանորեն արդյունավետ է և հնարավորություն է տալիս խուսափել ոլորտի

գրականությանը բնորոշ եզրութաբանական շփոթից: Աղյուսակ 1-ում ներկայացված՝ խնամազրկությունը նկարագրող 11 հասկացությունների համեմատական բնութագիրը՝ ըստ շեշտադրման, վերլուծության մակարդակի և այն հարցի, թե տվյալ հասկացությունն ինչ է նկարագրում և ինչ չի նկարագրում, ինքնուրույն գիտական արժեք ունեցող արդյունք է:

2. «Անտեսանելի ծնող», «դե ֆակտո խնամազրկություն» և «միջանցքում հայտնված երեխաներ» հասկացությունները տեսականորեն հիմնավորված են և, ինչը հատկապես կարևոր է, ունեն ակնհայտ կիրառական ներուժ դեպքի վարման և կարիքների գնահատման պրակտիկայում: «Կառուցվածքային առկայության և գործառութային բացակայության պարադոքսի» ձևակերպումը հաջողված ընդհանրացում է, որը կապում է աշխատանքի տեսական և էմպիրիկ շերտերը:
3. Արժանիք է այն, որ հեղինակը չի սահմանափակվել սոցիալական կապիտալի ավանդական՝ բացառապես դրական մեկնաբանությամբ, այլ, հենվելով Փորթեսի (Alejandro Portes), Ֆայնի (Ben Fine) և Վուլքոքի (Michael Woolcock) քննադատական դիտարկումների վրա, ցույց է տվել համայնքային կապիտալի երկակի բնույթը՝ որպես ոչ միայն աջակցության, այլև վերահսկողության, խարանի և բացառման հնարավոր մեխանիզմի: Սա տեսականորեն հասուն դիրքորոշում է, որը համեմատաբար հազվադեպ է հանդիպում սոցիալական կապիտալի կիրառական հետազոտություններում:
4. Արժեքավոր է նաև երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի առանձնացումը որպես ինքնուրույն տիպ: Քոուլմանի (James S. Coleman) ավանդույթում երեխան, որպես կանոն, դիտարկվում է որպես ընտանեկան կապիտալի ստացող: Հեղինակի առաջարկած մոտեցումը՝ երեխային դիտարկել նաև որպես սոցիալական կապերի ձևավորման և վերարտադրման ակտիվ դերակատար, ինքնուրույն է և համահունչ մանկության սոցիոլոգիայի ժամանակակից հարացույցներին:
5. 2008–2025 թթ. ընդգրկող արխիվային նյութերի հիման վրա ձևավորված էմպիրիկ բազան հայաստանյան սոցիոլոգիայի համար հազվագյուտ ռեսուրս է: Աշխատանքի կարևոր արժանիքն այն է, որ տվյալների համապատասխան բազան ներկայացված է Հավելված 7-ում, ինչը նպաստում է հետազոտության թափանցիկությանը, արդյունքների ստուգելիությանը և հետագա գիտական օգտագործման հնարավորությանը՝ գիտական բարեվարքության տեսանկյունից գովելի պրակտիկա:
6. Հավելված 5-ը և ենթաբաժին 3.1-ի համապատասխան հատվածները վկայում են ուսումնասիրվող խմբի խոցելիության նկատմամբ հեղինակի պատասխանատու

վերաբերմունքի մասին: Դրական է նաև այն, որ հեղինակը առանձին ենթաբաժնում ինքնուրույն անդրադարձել է հետազոտության հինգ հիմնական սահմանափակումներին:

7. Խնամազրկության քառաչափ դասակարգման մոդելը՝ ներկայացված Աղյուսակ 2-ում, ինչպես նաև դրա դրսևորման վեց ձևերի դասակարգումը՝ բացահայտ, լատենտ, քրոնիկ-կրկնվող, ընտրողական, նորմատիվորեն լեգիտիմացված և ինստիտուցիոնալ միջնորդավորված, կարող են անմիջական կիրառություն ունենալ սոցիալական աշխատանքի պրակտիկայում և համապատասխան մասնագետների վերապատրաստման ծրագրերում:

Աշխատանքի արժանիքները չեն բացառում մի շարք դիտողությունների առկայությունը, որոնք, իմ կարծիքով, արժանի են քննարկման:

- Աշխատանքում նշվում է, որ որակական տվյալների վերջնական բազան ներառում է 239 դեպք և 321 երեխայի վերաբերյալ տեղեկատվություն: Այս ծավալի փաստաթղթային նյութի դեպքում անհրաժեշտ էր առավել հստակ ներկայացնել, թե կոնկրետ ինչպիսի ընթացակարգերով է իրականացվել որակական վերլուծությունը, ինչն է հանդիսացել վերլուծության միավորը, ինչ սկզբունքով են ձևավորվել հիմնական վերլուծական կատեգորիաները և ինչ փուլերով է իրականացվել կոդավորումը:

  Միաժամանակ աշխատանքից լիովին պարզ չէ, թե կոնկրետ ինչ քանակական մեթոդներ են կիրառվել և ինչ տրամաբանությամբ է իրականացվել որակական տվյալներից կառուցվածքային քանակական վերլուծության անցումը: Աշխատանքի բովանդակությունից կարելի է ենթադրել, որ իրականացվել է փաստաթղթային նյութերի համակարգված կոդավորում, որի արդյունքում ձևավորվել է քանակական վերլուծության տվյալների բազան, սակայն տվյալ մեթոդաբանական անցումը կարիք ունի առավել մանրամասն և հստակ նկարագրության:

  Նույն համատեքստում պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե ինչ չափանիշներով է որակական բազայում ընդգրկված 239 դեպքերից քանակական վերլուծության համար ընտրվել 153-ը: Փաստորեն, դեպքերի զգալի մասը դուրս է մնացել հետագա քանակական վերլուծությունից, սակայն բացառման չափանիշները և բացառված դեպքերի հնարավոր համակարգային առանձնահատկությունները չեն քննարկվում, ինչը կարևոր է նաև ընտրանքային շեղման հնարավորության գնահատման տեսանկյունից: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ որակական վերլուծության համար ներկայացվող դեպքերի

բազան ծավալով գերազանցում է քանակական վերլուծության բազային, ինչը, ինքնին հնարավոր լինելով, տվյալ դեպքում պահանջում է առավել հստակ մեթոդաբանական հիմնավորում:

- Քանակական վերլուծության մեջ ընդգրկված 153 դեպքերը, ըստ ներկայացված տվյալների, վերաբերում են արդեն խնամազրկության իրավիճակում հայտնված երեխաներին: Այս պայմաններում այն վարկածը, ըստ որի սոցիալական կապիտալի թուլացումը կապված է խնամազրկության ռիսկի բարձրացման հետ, խիստ իմաստով դժվար է ստուգել, քանի որ բացակայում է համեմատության խումբը՝ նմանատիպ սոցիալական ռիսկերի պայմաններում գտնվող, սակայն խնամազրկության իրավիճակում չհայտնված ընտանիքները: Ըստ այդմ՝ ստացված արդյունքները մեթոդաբանորեն ավելի ճշգրիտ կլիներ մեկնաբանել որպես սոցիալական կապիտալի առանձնահատկությունների և խնամազրկության ձևերի ու գործընթացային ուղիների միջև տարբերությունների բացահայտում արդեն խնամազրկված համախմբության շրջանակում, ինչը, ինքնին, արժեքավոր և լիովին հիմնավորված արդյունք է:
- Աշխատանքից լիովին պարզ չէ, թե ինչպես է 1389 երեխայի ընդհանուր համախմբությունից առանձնացվել 282 դեպք, ապա ավելացվել ևս 39 դեպք, ինչը թվաբանական առումով կազմում է 321 դեպք, մինչդեռ որակական բազայի վերջնական ծավալը նշվում է որպես 239 դեպք և 321 երեխայի վերաբերյալ տվյալներ: 321-ից 239 անցման տրամաբանությունը աշխատանքում չի բացատրվում: Նույն կերպ ցանկալի կլիներ ավելի հստակ ներկայացնել 10 առանցքային տեղեկատուների և հարցազրույցներին մասնակցած 30 երեխաների ընտրության չափանիշները:
- Ատենախոսության հիմնական տեքստում գրեթե բացակայում են 30 երեխայի և 10 առանցքային տեղեկատուների հետ իրականացված հարցազրույցներից մեջբերումները: Հաշվի առնելով, որ աշխատանքը կարևոր տեղ է հատկացնում որակական վերլուծությանը, երեխաների և մասնագետների անմիջական ձայների ներկայացումը կուժեղացներ ինչպես վերլուծության փաստարկվածությունը, այնպես էլ հեղինակի կողմից առաջադրվող տեսական մեկնաբանությունների էմպիրիկ հիմնավորումը:
- Ենթաբաժին 3.4.3-ում առաջադրվող փոքր համայնքներում խնամքի թերացումների նորմատիվ լեգիտիմացման մասին կարևոր պնդումը պահանջում է քաղաքային և գյուղական բնակավայրերի համեմատական դիտարկում կամ առավել զգուշավոր ձևակերպում: Ներկայումս այն, ըստ ներկայացված նյութի, հիմնականում հիմնվում է առանձին դեպքի վրա (Դեպք 6), ինչը բավարար չէ նման ընդհանրացման համար:

- Վերլուծության միավորի հարցը հստակեցված չէ: Հայտարարվում է, որ քանակական վերլուծության հիմնական միավորը ընտանիքն է (N = 153), մինչդեռ Child_Generated_Capital և Child_Agency փոփոխականները վերաբերում են երեխայի մակարդակի հատկանիշներին: Մինչև հինգ երեխա ունեցող ընտանիքների դեպքում անհրաժեշտ էր հստակ ներկայացնել, թե ինչ կանոնով են երեխայի մակարդակի տվյալները ագրեգացվել ընտանիքի մակարդակում: Այս հանգամանքը հատկապես կարևոր է, քանի որ արդյունքների նկարագրության մեջ հեղինակը հաճախ խոսում է «երեխաների» մասին, մինչդեռ համապատասխան հաշվարկները կատարվել են 153 դեպքի հիման վրա:
- Ենթաբաժին 3.5.8-ում որպես էմպիրիկ արդյունք ներկայացվում է «բռնություն, անտեսում և շահագործում» ռիսկի գործոնի և ընտանեկան սոցիալական կապիտալի միջև ուժեղ կապը (Cramer's V = .548), իսկ ենթաբաժին 3.5.2-ում՝ ապակառուցողական կապիտալի և բռնության ու մերժման ուղու կապը (75.0%): Սակայն Հավելված 8-ում ներկայացված կոդավորման սխեմայից հետևում է, որ ընտանեկան սոցիալական կապիտալի «ապակառուցողական» տիպի սահմանման մեջ արդեն ներառված են բռնության, անտեսման, շահագործման և կոնֆլիկտների առկայությունը: Նման պայմաններում արձանագրված կապը կարող է մասամբ պայմանավորված լինել փոփոխականների սահմանումների համընկնմամբ, այլ ոչ միայն սոցիալական երևույթի ինքնուրույն էմպիրիկ օրինաչափությամբ:

  Նույն դիտարկումը վերաբերում է «քրոնիկ-փոփոխական» կապիտալի և «ինստիտուցիոնալ շրջապտույտի» ուղու միջև արձանագրված կապին: Մեթոդաբանորեն ավելի հիմնավորված կլիներ կա՛մ սոցիալական կապիտալի ցուցիչները կառուցել խնամազրկության բնութագրիչներից անկախ դիտարկելի հատկանիշների վրա՝ օրինակ՝ վստահության, փոխադարձության, հաղորդակցության հաճախականության կամ աջակցության ցանցի չափի հիման վրա, կա՛մ բացահայտորեն նշել, որ տվյալ կապերը մասամբ արտացոլում են կոդավորման կառուցվածքային և բովանդակային համընկնումը և չեն կարող ամբողջությամբ մեկնաբանվել որպես ինքնուրույն էմպիրիկ արդյունքներ:
- Նույն դիտողությունն վերաբերում է երեխայի սուբյեկտության և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի միջև արձանագրված կապին (Cramer's V=.721, Հավելված 9.11), որը աշխատանքում ներկայացվում է որպես «հետազոտության ամենաուժեղ կապերից մեկը»: Հավելված 8-ում Child_Capital = 3 («խիտ») սահմանվում է որպես «երեխան ակտիվորեն ձևավորում և օգտագործում է սոցիալական կապեր», իսկ Child_Agency = 3 («բարձր»)՝ որպես «ձևավորում է սոցիալական ցանցեր, փորձում է փոխել իր իրավիճակը»: Երկու

փոփոխականների օպերացիոնալ սահմանումները զգալիորեն համընկնում են, ուստի արձանագրված բարձր կապը կարող է արտացոլել չափման ցուցիչների բովանդակային կրկնություն: Այս հանգամանքը ցանկալի էր քննարկել արդյունքների մեկնաբանության ընթացքում:

- Ընտանեկան սոցիալական կապիտալի տիպաբանությունը միավորում է առնվազն երեք տրամաբանորեն տարբեր չափումներ՝ հարաբերությունների որակը՝ դրական-կառուցողական/ապակառուցողական, դրանց կայունությունը՝ քրոնիկ-փոփոխական, և կապերի առկայությունը կամ բացակայությունը: Արդյունքում ձևավորվում է անվանական փոփոխական, որի կատեգորիաները չեն դասավորվում մեկ միասնական առանցքի վրա: Հենց դրանով կարող է պայմանավորված լինել այն հանգամանքը, որ ենթաբաժին 3.5.6-ում ներկայացված արդյունքները լիովին չեն համապատասխանում հեղինակի կողմից ձևակերպված մոնոտոն միտմանը. ռիսկի բեռի միջինը «կապի բացակայության» խմբում (2.82) ցածր է, քան «ապակառուցողական» խմբում (3.16), ինչը պահանջում է լրացուցիչ մեկնաբանություն: Այս անհամապատասխանությունը ցանկալի էր քննարկել աշխատանքի համապատասխան բաժնում:
- Կիրառված մի շարք կատեգորիաներ՝ հուզական հասանելիությունը, «անտեսանելի ծնողը», երեխայի սուբյեկտության մակարդակը, բարձր աստիճանի մեկնաբանական բնույթ ունեն: Քանի որ կոդավորումն իրականացվել է մեկ հետազոտողի կողմից, որը միաժամանակ ոլորտի պրակտիկ մասնագետ է, ցանկալի կլիներ գնահատել կոդավորման հուսալիությունը, օրինակ՝ տվյալների ենթաընտրանքի կրկնակի կոդավորման և միջկոդավորող համաձայնության գնահատման միջոցով: Այդ նպատակով կարող էր կիրառվել, օրինակ, Քոհենի կապպայի (Cohen's kappa) գործակիցը: Հեղինակի ռեֆլեքսիվ դիրքավորման վերաբերյալ անդրադարձը կարևոր է, սակայն ինքնին չի փոխարինում կոդավորման հուսալիության գնահատմանը:

  Նույն համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերլուծությունից դուրս են մնացել «կամավոր հրաժարման» և, հատկապես, «համայնքային ճնշման» ուղիները: Վերջինս ուղղակիորեն առնչվում է աշխատանքի կարևորագույն տեսական դրույթներից մեկին՝ համայնքային սոցիալական կապիտալի բացառող գործառույթին, ուստի դրա ավելի մանրամասն ներառումը վերլուծության մեջ կարող էր լրացուցիչ ամրապնդել աշխատանքի տեսական և էմպիրիկ կապը:
- Երկրորդ գլխում մանրամասն ներկայացվում են Բուրդյեի (Pierre Bourdieu) հայեցակարգի մի շարք առանցքային դրույթներ՝ կապիտալների փոխարկելիությունը և սոցիալական

անհավասարությունների վերարտադրությունը, ինչպես նաև Փաթնամի (Robert D. Putnam) «կապող/կամրջող» սոցիալական կապիտալի տարբերակումը: Սակայն նշված դրույթները որևէ կերպ չեն օպերացիոնալացվում կոդավորման սխեմայում և չեն ներգրավվում քանակական վերլուծության մեջ: Արդյունքում աշխատանքի էմպիրիկ հատվածում կիրառվող «սոցիալական կապիտալ» հասկացությունը զգալիորեն ավելի նեղ բովանդակություն է ստանում՝ հիմնականում հանգելով հարաբերությունների որակի և աջակցության բնութագրիչներին: Այս տեսական և էմպիրիկ մակարդակների միջև առկա տարբերությունը ցանկալի էր առավել հստակ հիմնավորել:

- Աղյուսակ 2-ում ներկայացված չորս չափումներից երկուսը՝ «նախորդ խնամողի հետ հարաբերությունների որակը» և «փոխարինող խնամքի հարաբերությունների որակը», կոդավորված են տվյալների բազայում (Previous_Caregiver_Relationship, Substitute_Caregiver_Relationship), սակայն քանակական վերլուծության մեջ փաստացի չեն ներգրավվել: Արդյունքում աշխատանքի առանցքային տեսական մոդելը էմպիրիկորեն ստուգված է միայն մասնակիորեն: Մինչդեռ հենց այս փոփոխականների միջոցով հնարավոր էր քանակապես հիմնավորել աշխատանքի կարևոր եզրակացություններից մեկը՝ կայուն և նշանակալի մեծահասակի՝ որպես երեխայի համար պաշտպանիչ կամ բուֆերային գործոնի դերի մասին, որը ներկայումս հիմնականում հիմնվում է առանձին դեպքերի նկարագրությունների վրա:
- Հավելված 9.3-ում ներկայացված է 8×4 չափի խաչաձև աղյուսակ՝ 153 դիտարկմամբ, ընդ որում «դրական-կառուցողական» սյունակի ընդհանուր հաճախությունը կազմում է ընդամենը 3 դեպք, իսկ բջիջների զգալի մասում դիտվող հաճախությունները գտնվում են 0–3 միջակայքում: Նմանատիպ իրավիճակ է նաև Հավելված 9.9-ում, որտեղ «ուժեղ» երեխայական կապիտալի սյունակը պարունակում է ընդամենը 14 դեպք՝ բաշխված ութ գործընթացային ուղիների միջև, ընդ որում մի շարք բջիջներ դատարկ են:

Այս պայմաններում անհրաժեշտ է նախ ներկայացնել χ^2 չափանիշի կիրառման նախադրյալների ստուգումը, մասնավորապես՝ սպասվող հաճախությունների բաշխումը և 5-ից փոքր սպասվող հաճախություն ունեցող բջիջների տոկոսը: Եթե համապատասխան նախադրյալները չեն պահպանվել, առավել նպատակահարմար կլիներ կիրառել Ֆիշերի ճշգրիտ չափանիշը (Fisher's exact test), Մոնտե Կառլոյի եղանակով հաշվարկված նշանակալիության մակարդակներ կամ, անհրաժեշտության դեպքում, միավորել առանձին կատեգորիաներ: Առանց այդ նախադրյալների քննարկման Cramer's V-ի և χ^2 վիճակագրության

արդյունքների մեկնաբանությունը պահանջում է զգուշավորություն, հատկապես հաշվի առնելով, որ դրանցից մեկը աշխատանքում ներկայացվում է որպես հետազոտության ամենաուժեղ կապերից մեկը:

- Բաժիններ Բ-ում և Գ-ում ներկայացված առաջարկությունները տրամաբանական են և ոլորտի համար ընդունելի, սակայն դրանց մի մասը ձևակերպված է բավական ընդհանրական լեզվով և ոչ միշտ է անմիջականորեն կապված հենց տվյալ հետազոտության կոնկրետ արդյունքների հետ: Մասնավորապես, «սոցիալական կապիտալի վրա հիմնված վաղ նախազգուշացման համակարգի» առաջարկը կարող էր ավելի գործնական և կիրառելի դառնալ, եթե ուղեկցվեր կոնկրետ ցուցիչների ներկայացմամբ: Աշխատանքն ունի դրա համար անհրաժեշտ էմպիրիկ հիմքը, և Հավելված 8-ում ներկայացված կոդավորման սխեմայի որոշ բաղադրիչներ հնարավոր էր զարգացնել որպես ռիսկերի վաղ գնահատման գործիքի նախնական տարբերակ: Դա էապես կուժեղացներ աշխատանքի կիրառական նշանակությունը:
- Աշխատանքում առկա են մի շարք անհամապատասխանություններ ձևակերպումների, հղումների և տվյալների բազայում առկա տվյալների առումով: Օրինակ՝ Հավելված 6-ում հայտարարվում է 11 տիպային դեպքի ներկայացման մասին, մինչդեռ աղյուսակը ներառում է միայն 10-ը: Միևնույն հասկացության համար զուգահեռաբար կիրառվում են «սուբյեկտություն», «սուբյեկտայնություն» և «սոցիալական գործակալություն» տերմինները: Ընտանեկան կապիտալի երկրորդ տիպը հիմնական տեքստում անվանվում է «քրոնիկ-փոփոխական», իսկ Հավելված 9.16-ում՝ «քրոնիկ-կրկնվող» և այլն:

Սակայն ներկայացված դիտողությունները չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը: Դրանց մի մասը կրում է խմբագրական և տեխնիկական բնույթ, մյուս մասը վերաբերում է առանձին եզրահանգումների և ընդհանրացումների առավել զգուշավոր ձևակերպման անհրաժեշտությանը, իսկ մի շարք հարցեր, մասնավորապես՝ օպերացիոնալացման տրամաբանության, կոդավորման ընթացակարգերի և վիճակագրական չափանիշների կիրառման հետ կապված, ենթակա են մասնագիտական քննարկման պաշտպանության ընթացքում:

Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ աշխատանքի հիմնական գիտական արժեքը չի սահմանափակվում քանակական բաղադրիչով և չի կորցնում իր նշանակությունը վերջինիս վերաբերյալ ներկայացված դիտողությունների պայմաններում: Խնամազրկության՝ որպես սոցիալական հարաբերությունների վերափոխման գործընթացի մեկնաբանությունը, դրա

լատենտ ձևերի բացահայտումը, «անտեսանելի ծնողի», «դե ֆակտո խնամազրկության» և «միջանցքում հայտնված երեխաների» հասկացությունների ներմուծումը, ինչպես նաև սոցիալական կապերի թուլացման, խաթարման, քայքայման և խզման փուլային մոդելը իրական ներդրում են հայաստանյան մանկության սոցիոլոգիայի և երեխաների պաշտպանության սոցիոլոգիական ուսումնասիրության բնագավառում:

Ատենախոսությունն ինքնուրույն և ավարտուն գիտական աշխատանք է, որն ունի հիմնավորված գիտական նորույթ, ծավալուն և եզակի էմպիրիկ հիմք, հստակ արտահայտված տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է ԻԲ.00.01 մասնագիտության անձնագրին, ստացված արդյունքները բավարար չափով արտացոլված են հեղինակի գիտական հրապարակումներում և ներկայացվել են գիտաժողովներում, իսկ սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունն ու արդյունքները:

Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Կարապետյան Տաթևիկ Զավենի, արժանի է ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ս. գ. դ.

Մ. Ի. Զապավսկայա

Մ. Ի. Զապավսկայայի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար Բ. գ. թ. **Մ. Վ. Հովհաննիսյան**

18.08.2026 թ.